

Հ Ա Ս Յ Է


Rédaction du Journal arménien
ARCHAËOUCHE

(EGYPTE) LE CAIRE

Չի հրատարակուած ձեռագիրները
ես չե՛մ տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ
ծանուցումները կ'ընդունուին մասնա-
ւոր նամակային տրամաբար :

Փարս — Ներ — Խմբագրութեան
ԵՂԻՅԷ ԹՈՐՈՍԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ք Ե Ր Թ

ՊԱՅՄԱՆՔ

ԵՂԻՅԷՍՈՍ

Տարեկան դրոշմ 30

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան ֆրանկ 10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՍՏ ԵՆՐՈՒ փոխարէն
վճարուած գրեթէ պիտի ըլլան :

Թե՛ ԱՐՇԱԼԱՅՍԻ և թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ ներքին խնդրոց համար
պիտի է դիմել ներքին գործերու
քննարկութեան Մասնախարարին, որ է՝

ՊԵՏԻՎ ՓՈՓՈՔԵԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԲԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրներու ուղղակի պատասխանում
ան էն իրենց գրածներուն

ZUSC 40 ՓԱՐԱ ՈՂՁ

ԽՄԲԱԳՐՈՒԿԱՆ ՁԵԿՈՅՑ

Յօդուածագիրներէն կը խնդրուի որ միշտ կարճ և ամփոփ ընեն լուր նամակներէն իրենց գրութիւնները :
Նոյնպէս գրաչափակներ սխալները չափաւորելու համար թղթին մէջ երեսը ու մաքուր և ընթերցանի դրելու հոգածութիւն ունենան :

ՀԱՅՐ ԵՎԱՐԱԳԻՐ ՈՒՆԻ՞

Ինչպէս որ ոսկին և արծաթը փորձաքարով կը փորձուին, այնպէս ալ կայ միջոցներ փորձելու թէ մարդ մը բարի և ազնիւ նկարագրերի տէր է թէ ոչ :

Աղքատութիւն, դժբաղդութիւն, և յաջողութիւն, զօրաւոր միջոցներ են մարդը փորձելու, մարդ մը յաջողութեան և խաղաղութեան միջոցներով տակ կրնայ ազնիւ և բարի նկարագիր մը փայլեցնել, մենք կրնանք խաղաղիւ նորա արտաքին երևոյթէն, նորա պերճաբան խօսուածքէն մենք կը դիտարկենք, արդարեւ նա ճշմարիտ մարդասէր մ'է իւր պէս պէս առատաձեռնութեամբ, բայց ահա անակնկալ ձախող դէպք մը կուգայ ամեն ինչ տակն ու վրայ ընել, մենք այն ատեն դէմ յանդիման կը գտնուիմք ներքին մարդուն այն զարթոյթի կրթութեան հանդէպ... ո՛ր կս դուռն հիմայ ո՞վ վե՛մ ու անուրի մարդու դուռ, բարոյապէս սինըքոր, մենք երէկ պաշտեցինք զքեզ իբր մի ճշմարիտ անձնուէր ազգասէր, քանզի դուռն, քու էութիւնդ կը զոհէիր քու ընտանիքիդ, ազգիդ, և մարդկութեան համար, բայց այժմ մի դժբաղդութիւն քեզ դիմակայեց զքեզ ընդդէմ քեզ, դու ուխտագրութեան քանի մը պէս քու եղբարցդ դիմակներուն վրայ կոխելով կը փախչիս :
Ո՛ր էք դուք ո՞վ պերճաբան քարոզիչ և ատենաբաններ, դուք որ մեզ հրեշտակային լեզուներով կը խօսէիք, դուք որ առաքելութեան վե՛մ մտնուէր տիպարներ կը հանդիսանայիք, բայց այժմ ձեր ազնիւութեան աննկարագիր կեանքի մի դժբաղդ եզրակացութիւնը ձեզ ևս դիմակայեց զքեզ : այժմ մենք յստակ կը տեսնեմք ձեր զարթոյթի եսասիրութիւնը և արծաթասիրութիւնը : արդարեւ քանի՞ սակաւութիւն են մեր մէջ այն ճշմարիտ ազնիւ նկարագրի տէր մարդիկները որոց առջև անշուշտ կը խոնարհիմք իբր մի պաշտելի էակ :

Բարի նկարագրով և սկզբունքով օժտուած մի մարդ կեանքի

ամբողջ ելեւէջի հանդէպ անպարտելի է : Թո՛ղ յարձակին իր վրայ դժբաղդութեան լէզուները. անթութիւն, հիւանդութիւն, աղքատութիւն, սուր և մահ, նորա ճակատին փառաց պատկն է, նա յաղթապանծ սուր ի ձեռին կանցնի այս մահուան ձորէն. պատիւ և փառք իրեն :

Այն անձը այն ժողովուրդը որ սկզբունք մը չ'դաւանիր, չէ կարող բարի նկարագիր մը ունենալ. և այն անձը որ նկարագիր չունի չէ կարող իր ազգին և մարդկութեան օգտակար ըլլալ :

Մենք առ այժմ կուզեմք քանի մը օրինակներով պատկերացնել այն հոյակապ դէմքերը, որոնք զուրկ ըլլալով բարի նկարագրէն, փտութեան և անբարոյականութեան որոմներ ցանցեցին մատաղաշ սրտերու մէջ, փուշերու և տատակներու արտեր յառաջ ընկելով :

..... Եան նախահայր ճանչցուեցաւ մեր արդի դրականութեան : Երբեք անով տօնեցինք իր արդիւնաշատ կեանքը բարձրացնելով զինքը եթէ իրենց իրենք : Բայց էական գիտէք թէ ի՞նչ գործ կատարած է նա և կը կատարուի. նա իւր ջօղայական և այլ ամբարշտ վէպերու թարգմանութիւններովը ամբողջ ժողովուրդը մը բարոյապէս փճացուցած է. նորա ցանած սերմերը փուշեր յառաջ ընկելու են յառաջ անիմով, նա բարի նկարագրէր զուրկ էր, և չէր կարող այլապէս ընել :

Ժողովուրդը մը որ սկզբունքի տէր չէ արտաքին երևոյթներէ և մտացածին խորհուրդներէ շուտով խաբուելու ենթակայ է, ուրիշ քանի՞ մեղապարտ է այն մեծ անձը որ այսպիսի ժողովուրդի մէջ փոխան ազգային և տոհմային բարձր նկարագիրները մշակելու, փոխան մարդկային բարոյականը զօրացնելու լպիրջ վէպերով և աւերիչ յօդուածներով դէպի քառս կ'առաջնորդէ, ո՞վ կարող է հակառակ պնդել թէ այսօրուան... ոյ ներկայ բարոյական տաճարը քանդուած է այս մեծ մարդուն ձեռամբ :

Այն երջանիկ տարիներու մէջ ուր կարելի էր ազգային տօներ տօնել մեծ հանդէսներով, մենք ներկայ գտնուեցանք Վարդանանց զօրավարաց յիշատակին մի փայլուն հանդէսին : պերճախօս ատենաբան մը դրուատեց վե՛մ կերպիւ Վարդանայ դրուատեց վե՛մ, ա՛յն է՝ զոհուել իր պաշտած կրօնքին համար, քանի՞ շինիչ էր այն տեսարանը ուր բազումք արտասուալից աչքերօք որոտընդոտ կը ծափահարէին « մեռնի՛ր բարոյական մի մեծ սկզբունքի հա-

մար » : և ապա բե՛մ յառաջացաւ մի դեռատի դպրոցաւարտ որ սկզբուած ոգի ի բռին քննադատել Վարդանայ մոլեռանդ արարքը, և նրկատեց զայն միակ պատճառ մեր ազգային կործանման : նա դրուատեց զՎասակ իբր մի մեծ դիւանագէտ և ճշմարիտ հայրենասէր և դաւաճն կերպիւ ողբաց որ Հայ ազգը չը հետեւեց Վասակայ կրակապաշտութեան՝ այլ հետեւելով Վարդանայ պէս կրօնամոլ և մի տգէտ զօրավարին, որոյ հետեւանք եղաւ ազգային իշխանութեան անկումը : Ժողովուրդը սրտագին ծափահարեց երիտասարդ ատենաբանը կեցցենքու ազգայնեցնելով : ցաւալի տեսարան և աննկարագիր ժողովուրդ :

Մեր նպատակէն դուրս է խորատուզուիլ այն անցեալ զարհուրելի տրամին մէջ քննադատելով մին կամ միւրը, ես երբէք չեմ կրնար հաւատալ որ ոչ Վարդանայ յաղթանակովը մեր ազգային գոյութիւնը տեւական պիտի լինէր, և ոչ Վասակայ դիւանագիտութեամբը, եթէ Վարդանայ արարքը կոյր կրօնամոլութիւն էր, Վասակայ արարքը զարջի մի վատութիւն էր : Հայաստանի աւերակներին վրայ իբր մի իշխան բազմելու զազրելի տենը մեզ զայն ուրացման, բայց Վարդան մի ազնիւ և բարի նկարագրի տէր ըլլալով զոհեց զինքը և իրենները իւր պաշտած մի ազնիւ սկզբունքներ համար :

Սկզբունք կը նշանակէ մի ամբողջ ժողովուրդի մի կենսական նրկատակի ծառայելը, ինչպէս պիտի ծառայէր մէկը իւր անձին համար : սկզբունքի մէջ չպարունակէր ոչ եսասիրութիւն : ոչ կրօնամոլութիւն և ոչ մի մարդկային եպերելի բնաւորութիւն, նա բնական է, արեան և ծովի հետ խառնուած է : միով բանիւ ժառանգուած է : մի ժողովուրդը որ սկզբունքով կը դաւանի մի Հայրենիք : այն դաւանանքի կամ սկզբունքի հանդէպ կը դադրին ամէն անձնական հաշիւներ, ատելութիւն և թշնամութիւն : սիրոյ և եղբայրսիրութեան կը փոխանցուի, չըկան այլ ևս հազարաւոր նպատակ կամ խորհուրդներ, մի նպատակ մի վե՛մ խորհուրդ և մի մարդ ունիմք մեր հանդէպ այն է կամ փրկութիւն հայրենեաց և կամ մահ և այս է հազարաւոր բայց մի մարդու սկզբունքը :

Կանի ցաւալի և արտասուի է որ մեր արեան մէջ կը պակսին այն կենսատու գնորակները որոնք բարի նկարագիր չինելու պիտի ծառայէին, երբէք չափազանցած չպիտի լինիմ երբ ըսեմ թէ մեր դարերէ հե-

տէ ունեցած ողբալի վիճակը, մեր ստրկութիւնը, կոտորածները, աղքատութիւնները, և ն. և ն. ուղղակի արդիւնք են մեր անսկզբունք և աննկարագիր ժողովուրդ մը ըլլալուն : մեր նախնիք ապրեցան ստրկութեան մէջ և մեզ փոխանցեցին արեւուն մը որ մեզ ըրաւ երկչոտ. փոփոխամիտ անհաստատ՝ միով բանիւ աննկարագիր և անսկզբունք ժողովուրդ մը, արդ քեզ կը մնայ ո՞վ սիրելի ընթերցող մեզ պատերազմ մը ճիշտ քու անձիդ դէմ : մենք չուինք մեր անձէն իզատ աւելի ահարկու և բանասարկութեամբ մը : գօտեպնդուէ դու ո՞վ Հայ պատանի երիտասարդ, հարուստ. աղքատ. կղեր. և գիտու. դու ունիս մի պատերազմ մը լուր քու թոյլ և երկչոտ խորհուրդներդ դէմ : քո նախնիք և եղբայրատեաց ողուող դէմ : քո անմիտական հոգեւոյդ դէմ :

Այս մեծ պատերազմը պիտի տեւէ այնքան երկար. որքան քու ամբողջ կեանքիդ տեւողութիւնը : այս սուրբ և ամենի պատերազմաւ դու ձեռք պիտի անցնես անեղ յեղաշրջում մը քու ամբողջ բնաւորութեանը մէջ, այլ ևս դու պիտի սկսիս սիրել քու եղբայրդ աննախանձ ողուով, դու արի և քաջ պիտի լինիս կեանքի ամբողջ պայքարին հանդէպ ստրկութեան լուծը պիտի թօթափուի քու ուսերէդ, դու պիտի անցնիս քաղաքակրթեալ ազգերու շարքին մէջ՝ որոնք հասած են հոն սկզբունքով և նկարագրով : ահա այն ատեն դու պիտի փոխանցես մի սուրբ և մաքուր արիւն քու ազգայ սերունդիդ : այն անձը, այն ժողովուրդը որ չ'խորհիր իւր ազգայ սերունդը՝ այն միակ վե՛մ զազափառականը, արդարեւ նա ճշմարիտ բնաւորուկ մըն է : նա իրաւունք չունի մարդկութեան շարքին մէջ ունենալ իւր դիրքը :

Միայն երկու դերագոյն միջոցներ կան այդ վե՛մ նպատակին հասնելու համար. որոնք հրեղէն երկասայրի սուրբու և ման պիտի ծառայեն քո ձեռացդ մէջ, խորտակելու քո մտացդ դարաւոր կապանքները, և պիտի ստեղծեն քո մէջ, սկզբունք և ապա նկարագիր :

Ա. սիրելի.
Բ. ատելի.

1. Սիրելի այն անձը այն էակը որ սիրելու արժանի է. սիրելի զայն ամբողջ հոգեւով և մտքով : քու եղբայրդ. ընկերդ. սիրի՛ քու անձիդ պէս, սկզբունքով նկատէ, չկայ աչխարհի վրայ և ոչ մի Հայ որ քեզ օտար լինի. ամենքին քո եղբայրներն են. և կամ ամենքին իմի առեալ քո անձն է. դու չես կա-

րող քո անձը անօթի և մերկ ձգել. դու զքեզ կը կարօտիս ո՞վ Հայ մարդ զոհէ քո ազնիւ սէրն քու եղբորդ, և եղբայրդ ալ քեզ համար ո՛ւր անձը պիտի զոհէ, սկզբունք ընտրէ քեզ. զոհուելով՝ զոհել:

2. Ատէ այն անձը որ ատուելու արժանի է. այո՛ ատէ զայն քու ամբողջ մտքովդ և հոգևովդ, դու ատէ խաբե՛րայ չլի՞նք. քեզ քու ատէ վատ և մարդասպանը, և վրաբերուէ քո շողքովդ ընկերդ. մի՛ զնիջանիք նորա փաղաքշանքին և մի հպարտանար նորա անկումովը, եթէ նա չըզգաստանար քու ատելու թեմալը, և չ'խրատուելը քու վսեմութեամբդ, ձգէ որ կործանի նա. Աստուած և Քրիստոսն ինքն ինքն համարիտ է որ կորսուի նա. և դու ճշմարիտ արտայայտի մը պէս ընտրէ քեզ այն բարձր սկզբունքը սիրելի և անսէլ. և այդ պիտի ըլլայ քո բարի նկարագիրն:

ԻՈՐԷՆ

ՆԱՄԱԿ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՍԵՆ

ՆՈՒԻՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

« Այն մարտիկները որոնք իրենց մէջ բարոյական ջունքն, փայտաբերութիւնը կոչուած են... »

(չարուն, նախորդ թիւէն եւ վերջ)

Ենթակոմիտէի անդամներէն Գ. Ն. ատանձին տեսնուելով Քօնստանուպոլիսի հետ կը յայտնէ որ, որքան որ շահուն կէսը սալու որոշուած եղած է, սակայն շատ է. մէկ երրորդը պէտք է առնես:

— Եստ լաւ. կըսէ, բայց պայմանազրուելու պէտք է զբաւոյր լինի և. իմ պայմաններս պէտք է ընդունիք, ինչպէս որ ասել եմ:

— Զէ՛, կ'ըսէ Ենթակոմիտէի անդամը, զբաւոյր պայման չենք ընդունիր:

Ու խնդիրը առ կախ կը մնայ, թէ՛ և « Արեւ » ին մէջ անգամ մ'ալ երեւցաւ « իմ երկնստ երգիչիկ խումբիս հրաւիրում եմ » ք ()

Կարմիր ինչի Տիկինները « Եւրատուրուկ » ի դերը կատարող իմբապետներէն աւելի արթուն գտնուելով՝ մերժած են քօնստը « առ այժմ »:

Ենթակոմիտէի սակարկիչ անդամը Լ. Պողոսեանին յայտնած է թէ՛ « առ այժմ յետագայում է » առանց ուրիշ բան մը յայտնելու:

Լ. Պողոսեան « Արեւ » ի մէջ կըստիպուի յայտարարել թէ՛ իրեն բոլորովին անձանօթ պատճառներով Ենթակոմիտէին յետագայում է ի նպաստ քաղաքական բանտարկեալներու քօնստը:

Աստիք իրողութիւններն են որ եւ ոչ մէկ պարագայի տակ խաւ – խաւ – շողայ չեն վերցընիր:

Քօնստանուպոլիսի Կինգաբլի, Cairo շոգինաւով Մարտիկայ գնաց տեսնելով որ ալ հոս մնալը աւելորդ թեւ մը ըլլալ է (**) : Սակայն « Արշալոյս » ի սիւնակներուն մէջ կը մտնայ հայհոյութիւններու ծրարը, մինչդեռ հետը ստանելու էր, և համալսարան մը ներկայացնելով իր մտքի այդ պայտարը, արժանաւայել վկայական մը առնելու էր, որ աւելի նպաստուոր կրնար ըլլալ իրեն, քան թէ Քօնստանուպոլիսի վկայականը . . . :

(*) Մ. Յ. Իր խանութի ըլլալու է . . .
(**) Մ. Յ. Ենթակոմիտէի անդամները Լ.

Ենթակոմիտէի անդամներուն մուծի մէջ մարդ կորսնցնելու, անպատուելու ու անարգելու այս ընթացքին զէմ բողոքելու համար « պաշտօնական ձեւակաւութեան » դիմելու է: Բայց որո՞ւ պիտի հասցընես թէ այս մարդիկը յեղափոխական չեն. թէ՛ աստիք ըզբաղուած են աղտոտ էնթրիքներով. թէ աստիք « կոյր գործիքներու » կամ homme de bois ներու գլուխը անցած, յեղափոխական գաղափարի բոլորովին հակառակ, իշխելու և տիրապետելու ձգտումով պիտի զգած իրերահաւանքի արշաւանք մն է որ սկսած են . . . :

Մենք կը բռնենք աստիք օձիկէն և հասարակութեան դատաստանին (**) առջև կը քայնենք և կը հարցընենք. ի՞նչ է շինածնիդ, շուկայի քերակա՞նութիւն կը սորվեցընէք փոխանակ ազնիւ և ուղղամիտ քաղաքացիներ պատրաստելու. թէ կոյր գործիքներ կը պատրաստէք միմիայն Ձեր անձին և անունին փառաբանութիւն համար: Կազմակերպութիւն կը ներկայացնէք թէ շահատակութեան ասպարէզ կը բանաք: Անոր ասոր պատիւին հետ խաղալու համար Ենթակոմիտէ եղած էք. թէ ազատագրութեան գործ տեսնելու . . . :

Պողոսեանի միջոցաւ ասիէ աւելի բան մը չէին կրնար ընել՝ թէ իրենց հոգիի ալիւնդակութիւնները ցուցընելու և թէ ունեցած պատուաւոր քաղաքացիի մը նկարագիրը ի յայտ բերելու համար: « Սուրալիզմ » ի և « բողոքող Դաշնակցականներու » հակառակութիւնները մը շահուած միջոցին, անկից առաջ ալ եւ մինչև իրենց հերոսանալու օրն նոյն իսկ, միասին առնելով Շահէնը ու Վահէնն ալ, կոյր գործիքներու գլուխը անցած, « սրճարաններէն » կ'ընկէն իրերահաւանքի նոր թուական մը բանալ: Երբ Լեւոն Պողոսեան իր հայրու թիւններուն մէջ « սրճարանային տրամաբանութիւն » սրճարանային բարոյականով » եւլն, բաներ մը կը մոլտայ ինչ ըսել կուզէ, եթէ նկատի առնենք, ոչ թէ միայն այս տողերը գրողը, այլ Աղէքսանդրի մէջ գրեթէ ամբողջ հասարակութիւնը սրճարան կերթայ, ինչպէս նաև Ենթակոմիտէի անդամներն ալ՝ « Սէմիտաիս սրճարանը » (և եթէ չենք սխալիք քօնստն Ստիվիայն ալ) ուր կը մտածեն և կը ծրարեն թէ ինչպէս այս կամ այն անհատին « գլուխը ճըզմեն », թէ ինչպէս իրենց կուրօքէն չի հետեւողներուն անունը մրտեն. վարկարկեն, և այս սրճարանի մէջ կրնան ճակատաբաց միակը ներկայանալ, նամանաւանդ որ ամէն պարագայի մէջ ալ տրամադրելի ունին Լ. Պողոսեանի պէսներ այս կամ այն կողմը յարձակել տալու համար:

Եթէ խնդիրը « պատուաւոր քաղաքացի » ի շուրջ կը դառնայ, կերուելի որ, բացի Ենթակոմիտէի անդամներէն բոլոր սրճարան յաճախողները, բժիշկ, փաստաբան, վճարողական եւլն ամէնքն ալ անբարոյականներ են . . . : Իսկ գալով այն պարբերութիւններուն մէջ ոչ սրճարաններու մէջ « մուրացկութիւն » քրած ենք, և ոչ ալ « բարեգործական հիմնարկութիւններու » հետ գործառնութիւն ունինք, կերուել Լ. Պողոսեանի սխալ տեղեկութիւն ստացած է Ենթակոմիտէի անդամներէն: Սա ալ ճակատաբաց կրնանք ըսել որ Դաշնակցութեան հաշուով ապրող մակարոյ չէ այս տողերը գրողը, իր քօնստներով զէպի Մարտիկայ ճամբորդել սակայն ցոյց կուտայ որ ինք կատարեալ մակարոյ մ'է՛ պզտիկ տղաքներու և աղջիկներու քըրտիքներով ու ձայներով ապրող, և ասիկայ պատիւ չի բերեր « Սողալիզմ » վարդապետութեան հետեւողի մը:

(***) Հասարակութեան դատաստանը, իրենց կողմած մարդամեքենաներու օրնկերական ատենէն » շատ ու շատ բարձր է անշուշտ:

Եւ արդէն, երբ տիկտատորի հրամայողականութեամբ կը պօսան իրենց քուէ սուղներուն « իշտէ մենք ասանկ ենք. թող քուէ չի տայիք, չի հուսնեցաք նէ զու՛րս »: այն ժամանակ խելքը զուլեւը եղող մը կը վախնայ այդ կազմին մտնելու՝ շանպատուելու համար. ու բնական է որ գիտակիցները և զարգացածները հետո կը մնան և տեղը կը լեցուի մարդամեքենաներով ունակով: ու գործերը առաջ կերթան այնպէս՝ ինչպէս որ կը պահանջէ տիկտատորներուն քմահաճութեան ֆէյթը:

Իսկ երբ քննադատութեան առարկայ կը դառնան այն ժամանակ կը քնն մարդամեքենաները և կամ Լ. Պողոսեանի պէս քօնող հայհոյիչները՝ կատարուած և վերջացած շահագործումի իրրու գիտակից փաստաբաններ:

Տեսնելով այս տխուր և սահմոկեցուցիչ իրականութիւնը, ասպարէզ կուտանք իրենց, որպէսզի սեզանուն չափ հայոհեն, և կոյր գործիքներէն ուժ առնելով իրենց դերին տէրն ըլլան լիովին, որոնք զէմ բառ մը պատառխան տալը իսկ բոլորովին յիմարութիւն պիտի ըլլայ այլ ևս մեզ համար:

Ա.Ր.Ս.Մ 27 Յունիս 1908 Աղէքսանդրիա

ՀԻՍՏՈՒՄԱՅԻՆ ՀՈՎԵՐ

Աշխարհի մէջ ոչինչ կայ կայուն: Անոնք որ մասնակցի հատկի մը չափ հաւատք պահած ունին իրենց թուլացած կուրծքին տակ՝ պիտի ընդունին արդէն թէ աշխարհս խաղալիկ մըն է՝ նախահամութեան ձեռքը:

Այո՛, ազգ և ազգիք պիտի դան ու պիտի երթան, իրենց հետ քշել տանելով ամէն օր ինչնցած ձեռքացած մարդկութիւնը: Բնութեան օրէնքն է այս. ամառը պիտի յաջորդէ զարունին, ձմեռը՝ աշունին, և պատմութիւնը հոն է ցոյց տալու համար թէ ինչքան ազգեր եկած քնացած են շատեր ճղճիմ հետք մը միայն թողնով իրենց հետին: Այսպէս, մեծերը պիտի պզտակնան, պզտակները պիտի մեծանան, զօրաւորը ու խելացին միշտ կու տալով իրենց մէջ սկարները, ազնաներն ու կոյրերը: Ազգեր կան որոնք այսօր մեծ և զօրաւոր կերեւան, բայց ո՞վ գիտէ թէ ինչ պիտի ըլլան մէկ և երկու տասնեակ զարվերջ որովհետեւ ինչ որ հարկեր տարին է անհատի մը գոյութեանը համար՝ նոյնն է հազար տարին ազգի մը համար: Ու՛ր մնացին հին Հուսիս Հովիտի Յւլազան և Փարաւոններու հին Եգիպտոսը: Բնութեան օրէնքը առաւել կամ պակաս քմահաճ բայց անխղիւ. քննց տարաւ ամէնքն ալ՝ իրենց հետին թողնով միայն անուշահոտ բուրմունք ուրոնք ապագայ սերունդներու երազել կուտան:

Այն անհատները և՛ հետեւաբար՝ այն ազգերը միայն քիչ մը աւելի ապրելու իրաւունք ունին եթէ խելքով գործել գիտեն, և զարուն պահանջներուն համեմատ կ'ընթանան: Անգլիայ, որ այսօր շատ իրաւամբ աշխարհի ամենէն զօրաւոր ազգերէն մին կը համարուի, շատոնց սկարացած պիտի ըլլար եթէ խելքով գործած և իր բազմաթիւ գաղթավայրերու, մէյ մէկ քիչ գոնացում տուած չըլլար: Եւ երբ ազգ մը պիտի սկարանայ, և կամ գոյութեանէ պիտի զաղըի, սխալներ սխալներու վրայ կը գործէ, ներքին և արտաքին թշնամիներ կը շատնան, բնութիւնը հարուածներ կ'իջեցնէ իր գլխուն, իր աշխարհագրական գիւրքը աննպաստ կ'ըլլայ յանկարծահաս յարձակումներուն համար, և զօրաւոր զբաղին կը լսիկ ու կոչընչացնէ զինքը:

Բայց կարելի է ենթադրել թէ՛ ամեն դար քիչ մը իր նոր պատուհանները պիտի ունենայ, Ա՛յ, նոր ու զարուհուրելի պատուհանի մը առջև է որ կը ինչ որ բազմաւոր պատերազմները, անուշաբուրեւ եղած են հին դարերու համար, ատոնց վրայ նոյնպէս աւելցած դարուն նոր ժանտախտը, քաղաքակրթութեան անխելով որդեգրելու ակառնայ, ամենէն առաջ և ամենէն անվիրան հանդիսացող մէկ պատուականագոյն սղգին սկարացումին . . . :

Փոստան է ան, աւա՛ղ, այն այսքան սիրուած Փոստան, և, ինչ որ այս սիրելի աղջկէն ծնունդ կ'առնէ, զեղեցիկ թէ տղիդ, օգտակար կամ ո՛չ, հըրաբուր լալաներուն նման կը տարածուի աշխարհի քիչ մը ամեն կողմը, կազգէ՛ աւելի կամ պակաս բոլոր ազգերու խորհեւակերպին ու նիստ ու կացին վրայ:

Մինչդարձութեան նուազումն է, որուն վրայ սարիներէ ի վեր կը խօսուի ու կը գրուի, ատանց զքաղաքաբար ո՛ւր է գրական արդիւնքի մը, և մինչդեռ իր գրացի երիտասարդ թշնամին, Գերմանիա, օրէ՛ օր բազմամարդութեան նոր հանքեր կը փնտնէ, աղդին խեղճ Փոստան է որ ծննդաբերութեան նուազումի երեսէն կակուր մը տասանչուիլ. տապալկիլ և այս սխուր պարագան, եթէ շարունակուելու ըլլայ, տարակոյս չկայ թէ՛ Փոստը – Գերմանական պատերազմէն շատ աւելի սուղի պիտի նստի իրեն համար:

Ընթերցողին ցոյց տալու համար թէ ինչ անուշի համեմատութիւններ ստած է ծննդաբերութեան նուազումը Փոստայի մէջ, շահեկանութիւնէ զուրկ չըլլայ թերեւ հետեւեալ ցուցակը:

1901	857, 274	Մնուկը.
1902	845, 378	»
1903	826, 712	»
1904	818, 229	»
1905	807, 291	»
1906	806, 847	»
1907	773, 969	»

Այս թիւերը ինքնին շատ պերճախօս են արդէն, որոնցմէ եթէ զեղեւուր ըլլանք մեռնողներու թիւը, 793, 889 մեռեալ 1907 տարուայ մէջ. տեսէ՛ք թէ զեղջիլ տարբերութիւնը ինչ պիտի ըլլայ: Խեղճ Փոստա:

Իր սանձարձակ ազատախոնութեան զոհն է ինքը: Եւ զարմանալու պատճառ մը չիկայ ստոր համար: Երբ կրօնական զգացումը կը պակաս ազգի մը քով, երբ ընտանեկան սրբութիւնները իրենց վեհութիւնը կը կորսնցնեն, երբ ամուսնալուծումը աշխարհի ամենէն զիւրիս բանը կը դառնայ, աղտոտ, փողոցային ու անբարոյացուցիչ հրատարակութիւնը, աւելի յարգ, պատիւ և ծաւալում կուտան քան թէ ազնիւ և անաչնի կը ընկան քան թէ ազնիւ և անաչնի կը ըլլայ որ այլևս ցանկութիւն, շնութիւնը և պոստիկութիւնը այսպէս ներելի բաներ դառնան:

Փոստան է միայն արդեօք որ մեզի եկած է այս զարշահող պարզաւոր՝ քանի որ ֆրանսական ախա կըսենք « սիֆիլիզմ » ին համար: Ամերիկացիք որոնք այնքան eccentric կերեւան իրենց ամէն բաներու մէջ, French novels, անուշով մկրտած են, աղտոտ գրականութիւնը: Քանի մը տարիներ ատաջ, մեզի այցելու Ռուսահայ Սրապիտն քահանայ մը՝ « Նոր – Օր » ի մէջ կըսէր թէ՛ ֆրանսայի կիւնիլը բոլորն ալ պոստիկներն են. ուրիշ մը պիտի ըսէ թէ՛ ֆրանսայի մէջ՝ մարդիկ՝ քառասունը անցուցած՝ անուշահամութիւն չունին ևւլն. ևւլն:

Աստից ամենուն մէջ, բնականաբար չափազանցութիւնը իր մեծ տեղն ունի, բայց իրենց մասնակի ճշմարտութիւններն ալ ունին, որոնց մէկ տխուր ապացոյցն է վերոյիշեալ ծննդաբերութեան ցուցակը արդիւնքը ըլլալով

մարդկանց չափազանց հասարակական փողոցային կենցաղավարութեան և բարքերու կատարեալ վատթարացման:

Դարուն աղէտն է այս, որուն հետեանքներն սկսած են մտահոգութեան աղբիւր դառնալ խորհոյ եւ նուազ ֆրանսացիներու ջրով:

Պեռանձե անուն մարդ մըն էր՝ որ ինքը գրեթէ միս մինակ, խօսքով ու գրչով կը մտառէր. կը պոսար ու կը կանչէր աղտոտ բարքերուն և փողոցային մերկավարանոց արտադրութեաներուն զէմ. և իր արտունջը, շատ անգամ ձայն բարբառոց յանապատի կը մնար և՛ այսպիսի բարի մարդ մըն է, որ «Père la Pudeur» ծագրանունով կը յորջորջուէր խել մը ինքզինքնին ազատական կարծող ինչպէս և փողոցի բոլոր սրիկաներու վարնոց զասագիրքէն:

Հիմա, սակայն, իր բարի սերմերը սկսած են իրենց մասնակի հունձը ունենալ. և կարգ մը ուրիշ լրջօրոն ֆրանսացիներ ուզած են իրենց օժանդակութեամբ բերել «Fédération des Sociétés Françaises contre la Pornographie» զինակցութեան մը անունին տակ, իրեն նպատակ ունենալով սանձ մը դրնել փողոցային գրչի և վրձինի թուաւոր արտադրութեաներուն զէմ:

Հիւսիսային հովերը պիտի ըլլան այս ազնիւ ջանքերը ֆրանսայի խելով ժողովուրդին համար հարաւային այն խորշակներէն յետոյ, որոնք ազարանցին ցամաքացի մարտեր արեւը այդ պատուական ազգին քով, և որմէ ժանտախտի պէս փոխանցուցաւ գրեթէ ամբողջ աշխարհի, քիչ մը ամէն թեթեւամտ և նորութեաներու սիրահար ժողովուրդներու քով:

Մաղթենք որ այդ ազնիւ ջանքերը արդիւնաբեր ըլլան ամբողջ մարդկութեան. և զորոշ ըլլանք մենք հայերս, որ, երբ օր մը Աստուած մի՛ արտոցէ մեր հիմակուան փողոցի մէջ վեր բարձրանալու ըլլանք՝ պէտք չունենանք ևս ետ դառնալու, հիւսիսային հովերու ի խնդիր. մեր արագավազ ճամբորդութեան պահուն գործած խոշոր խոշոր սխալներուն բերուածքով, խորթ և անպիտան բարքերը ընդօրինակելու թեթեւամտութեամբ:

գրիտ հանգուցեալ Տ. Տիրան Փափազեանի կողմէ զրկուեցայ առ Եւհնուդար կամ Արփիար, ծանուցանելու համար թէ՛ Տիրան Փափազեան արամազընէ ժամանակ չունէր թերթին Ա. երեսը պատրաստուիլը անհրաժեշտ եզրը թողարկելու և այլն. աշխատութեանց համար:

Պէտք է ըսել թէ Տիրան Փափազեան, որուն քով գրաշարութեան ուսանող էի, ստէպ կը կանչուէր «Հայրենիք» էն թէ՛ թերթին ֆանթի թորմաները կապելու, և թէ՛ նեղ պարագայներու մէջ գրաշարներուն օգնելու. Երբեմն կը պատահէր որ գրաքննիչ Մինաս էֆ. ամբողջ շարուած էջ մը կը ջնջէր՝ և գիշերները պէտք էր աշխատիլ թերթը առաւօտուն հասցնելու համար: Միևնոյնը կը պատահէր շատ անգամ «Ճերմակի Երգիչի» մէջ: Այսպիսի ժամանակներ՝ ս'ը նուազ հաճելի էր տեսնել տպարանին մէջ տիրող իրարանցումը, և գրաքննութեան ճակատի փակցուած խառջոյ հայհոյանքները. . . . Այդ բերքը որչափ կարելի է յուսալ՝ գրաշարանոցներու մէջ մեծ յառաջդիմութիւններ ըրած ըլլալու էր:

Հաս փակագիրք մը:

Վեց ամիսէն գրաշարութեան վկայեալ ընթացաւարտ էի. իսկ իմ ունեցած այդ յառաջդիմութեանս վկան կը մնայ՝ եթէ կը մնայ՝ Սեփառացի աշուղտի թագուս պատուելի կէօզիւրները:

Այս վերջինը՝ եթէ չիմաստիլ՝ Տր. Տրպէնէ թարգմանուած «Առողջապահական» հատոր մը հրատարակութեան կուտար, իսկ այդ հատորին շարքը ես էի:

Չարմանալու պատճառ տուած չեմ ըլլար, եթէ աւելցնեմ որ այդ գրքին քննադատականները կըր գրուեցան Պօլսական թերթերու մէջ, իմ գրաշարութեան վկայականիս փառաբանութիւնը ըրած ըլլալու համար անշուշտ, գրքին մէջ սպրդած 1600 տառասխալները նրկատուութեան առնել մուցած չէին. . . որուն համար հիմայ ես ալ պարտք կը համարիմ իմ շնորհակալիքս յայտնելու Պ. Պ. քննադատներուն:

Բայց այդ գործին մէջ ես ո՛ր և է յանցանք չունէի, որովհետեւ թագուս պատուելիին միակ որդին՝ Ա. Էտիս կեօզիւրեան (այժմ Տէր Զայրմայր քահանայ Պէշիկթաշի եկեղեցին) «Ճերմակի» ն կաշխատակցէր և գրքին փորձերուն սրբազրութիւնը անձամբ ըրած էր:

Արփիարի հետ երկրորդ տեսակցութիւնս քիչ մը քաղաքական գոյն ունէր. թէ՛ ինչպէս:

Դաժ-գաբուի Մայր եկեղեցւոյ գլխաւոր Պ. Գրեգոր Մէջթէրեանը առանց բանաւոր և իրաւացի պատճառի, Գաղաց Դասու Գործ. Ժողովոյ կողմէն հրատարակուցուցաւ յանկարծ:

Մէկ քանիներու հետ հակառակ կեցանք այդ հաստատուած անիրաւութեան զէմ՝ և Մէջթէրեանը իր պաշտօնին մէջ վերահաստատելու ջանքէն: Հարկ եղաւ Գաղաց Դասու անդամներէն ստորագրեալ հանրագրով մը խորէն Աշքեան Պատրիարքին ներկայանալ, ու այդ պատգամաւորութիւնը ինձի վստահուեցաւ՝ ուրիշ ընկերոջ մը հետ:

Պատրիարքին հետ սանկ «հարեանցի» բանավէճի մը բռնուեցայ, որովհետեւ երբ հանրագրին յարակից մասերը կը լայնատրէի ու ինք բաւական նեղ մնաց, քաղաքացիական խնդիր յարոյց լսելով որ, «ես Ա. Բարեկերցի ըլլալով՝ ինչպէս Պօլսացիներուն գործին կը խառնուէի. . . »

Պատրիարքին պատասխանը արամաբանական չը գտայ. և այդ բանաձևը իմ Երեմիա նետերուն մէջ անիրաւ ըլլալը յայտարարելէս յետոյ Պատրիարքարանէն սպրդակ Արփիարին քով առի յանչու:

Պատմեցի խնդիրը: Ինձի համարիտ գտնուեցաւ, և՛ առանց հրապարակի խնդիր գարձելու ուղղու Պատրիարքին անձա՛հ պատասխանները, խօսք տուաւ որ մէկ միջոցը գտնէ մեր կողմի իրաւացի պահանջին գոհացում տալու համար:

Գանի մը օր յետոյ՝ Գաղաց գասու Գործ. Ժողովը մասնաւոր նամակաւ մը «պատիւ կ'ընէր» պաշտօնի հրատարակ Պ. Մէջթէրեանը և միջադէպը ա, ս կերպով կը փակուէր:

Պօլսոյ մէջ Արփիարին հետ ունեցած ծանօթութիւնս այս երկու սրբազաններէն անգին չեն անցնիր:

1899 էն ապրիլի մէկ երկու անգամ ալ Գահիրէ հանգիւսած եմ իրեն:

1905 էր, Կովկաս մեկնելու գիտաւորութեամբ Մեջթէրեանի յարկէն: Այնտեղ հանդիպեցաւ Արփիարեան. Վենետիկէն նոր եկած էր. Պ. Սր. Սրմաքէշխանեան մասնաւոր յօդուածով մը խիստ լաւ նրկարագրեց Արփիարի այդ տոնտուան խեղճուկ վիճակը. Եթէ Տ. Մ. Թեւեան ձեռնառուութիւններ չընէր՝ շատ աւելի արգահատելի պիտի ըլլար անոր կացութիւնը: Խիստ լաւ գիտեմ թէ՛ Տիրար Թեւեան ս'ըրչափ մեծ բարեկամութիւն ցոյց տուաւ իրեն նրկութեան և բարոյագէտ:

Այդ օրերէն մէկը՝ Աղեքսանդրիոյ մէջ մեզի իրարու ծանօթացուց Պ. Սրմաքէն. Օտեան սա՛ բաւերով:

«Ձեզի կը ներկայացնեմ «Արշալոյս» ի վարիչ Եղիշ Թորոսեանը. Լեւոն Մկրտիչեանին ալ բազուկը, և կատաղի հակառակորդ մը վիրաւայ ձեռք ձգելու համար սահմանադրական պայքար մշտնջերս. . . »

Արփիար ժպտեցաւ. . . . Ե. ՅՈՐՈՍԵԱՆ (Մնացեալը յաջորդով)

ԻՂՋԵՐ
Հայրենիքիս ևս գրուած, Տե՛ս. արեւն ալ երազ,
Աշխարհն ողջ ի՛նչ ունի,
Բոլորն ըսին մաշիկի.
Երբիք չե՛ս զրամ
Թե ոչիս մը ունի հայրենի:
Նայե՛ց, տե՛ս գտնուին ունի արօս.
Սրճիկն ունի իր կարօս.
Գիշտից մի՛ն իսկ միսն հեզ.
Որք դարձեալ չեն պիս մեզ.
Վիս ըլլան բոլոր աշխարհի հաւաքն
Հրաւեր կարգաւ հոգոյս միսն,
Սոքրեւ առ Տեր սմարտս,
Ճեւեղով հանգիւս յԱրարտս:
Երբ ողջ աշխարհն ըսէ ինձ,
Թե հոս դուն ունի՛ս մի ինձ.
- Ես եմ ոչիսս թե հայրենի՛
Ազգասրբեան կարօսի.
Նրա սիրուն թե ի՛ն հոգիս,
Ըրայ ձօն Սարգիսարայիսս,
21 Մարտ 908 ՇԱՀԷՆ

ԼԷՕԻ ՅՈՒՅԵԼԵԱՆԸ

Ռուսահայ տաղանդաւոր գրագէտ-պատմաբան Լէօի (Առաքել Բարսեղեան) Յուլիանի թիֆլիզի մէջ տարւոյս Մայիս ամսոյ վերջին եօթնեկէն կատարուիլը ծանուցինք արդէն:

Մանուկիք նաև այդ Յուլիանի Պահիրէի մասնակցողներուն անունները՝ ինչպէս նաև «Լայտան-խէրեան» ստորագրութիւններով Գահիրէնակ ազգայիններու կողմէ արուած շնորհաւորական հեռագիրը:

Մեր թերթին անձակ էլիքը, գէթ առ այժմ, թոյլ չպիտի տան մեզի գժքաղբաբար, աւելի ընդարձակ ծանօթութիւններ տալ Յուլիանի մեծաշուք հանգիսին, և մեծատաղանդ Յուլիանի մասին, և մանաւանդ՝ արտագրութիւնը ընել Լէօի իմաստալից ճառին, զոր արտասանած է հանգիսին օրը:

Բայց բոլորովին աննկատելի չը թողելու համար այս գեղեցիկ հանգէօր, գոնէ քանի մը տող պիտի նուիրենք շնորհաւորականներու և Յուլիանի արգիւնքի մասին:

Բացի կարեւոր և աչքի ընկնող ազգային հաստատութիւններէ և անհատներէ ուղղուած երեսունէ աւելի շնորհաւորական հեռագիրներէն և նամակներէն, հետեւեալներըն ալ կարճադարձ Ռուսահայ թերթեր:

Վիեննայէն՝ Հանգէս Ամսօրէի խմբագրութիւնը. Վենետիկէն՝ Մըխիթարեաններու հայկական ճեմարանի վարչութիւնը. Ժընէվէն՝ «Դըրօչակ» ի խմբագրութիւնը. Մոսկուայէն՝ Լազարեան ճեմարանի վարչութիւնը. Պագուէն՝ բարձրասոր Մաս. Ֆիլիպպէն՝ Ռադիկ. Բարիլէն՝ Երկրագտէ. Պետերբուրգէն՝ Տոմայի ձայնաւոր Սաղաթէան. Ախալցխայէն՝ Հայկական գաղութներ ռուսացական կազմը և ըն. և ըն:

Ընդմենով. - Թիֆլիսի ՎՏԱԿ օրաթերթը հետեւեալ նուէրները կ'արձանագրէ:

1. Գ. Բաշինջազեանից՝ մի լուզաներկ պատկեր:

ՈՂՐԱՃԵԱԼ ԱՐՓԻԱՐԻ ՄԱՍԻՆ
(Անձնական ծանօթութիւններ)

«Արշալոյս» ի խմբագրութիւնը Աղեքսանդրիայէն 27 Յունիս 1908 թուականու նամակ մը ստացաւ, «Շահ - էն» կեղծ ստորագրութեամբ, որմէ երկու տող վարը՝ Իրեն անձնաձօք իսկական ստորագրութիւն մ'ալ գրուած էր, որուն հրատարակութիւնը զանց կ'առնուի առ այժմ՝ քանի որ ստորագրողէն արտօնութիւն առնուած չէ:

Խմբագրութիւնը իմ կործիքս ուղեց այդ նամակի պարունակութեան ինչ ինչ կէտերու մասին:

Պէտք է ըսել թէ Արփիարի «Մատնութեան» շուրջ կը դառնար խնդիրը և այդ մասին իմ գիտցածներս շատ «հարեանցի» պէտք էին ըլլալ: Այսինքն այդ գործին ակնորակ թերթերը կարգաւորով միայն:

Ուստի ըսի. Ես Պօլսոյ մէջ երկիրս միայն հանգիստ եմ Արփիարին. մին՝ Պօլսոյ «Հայրենիք» ը գեռ նոր հրատարակուած՝ 90 ական թուականներուն, տպարանական գործի մը պատճառաւ «Հայելի» զաւելցուած թերթի խմբագիր Աղեքսան:

ՀԱՏՆՈՒՄՆԵՐ

Խորհրդարան ու ծրագրուած պրոսիս մեջ Տրիստր քեյեր կը սարսուռակ խիստ առ խիստ Հո՛ն կայ հաւակ ոչնչութիւն հոտ անշիջ Ուր արցունքներ կազմեն միայն ցոյի շիր. . .

Խորհրդարան ու բոցավառ վիշտնս սե՛ւ. կը կոծկոծեն իմ հուսկ յետեւ սե՛ւ վրէտ. Ուր կայ անդունդ, ցաւ փառս վիշտ յարատեւ Հրախոյ վի՛ն մը ուր ինձ վիշտը կը հիւստեւ. Անս' դարձան մըն և սրտս ընձե՛ն ծով. Ուր աշխիներ կը ծրփոքփան սե՛ւ ու մերկ Գնդեղան մը ներս սիրոյն սուկ խոսով՝ Գերբողի վե՛ն ախիւնով յուզող երգ. . .

Բըսան ու հիկոց սարիներու ծաղիկներ. Պիտի խաւիկն արտասուսից ըստ դարձի. ներս սիրոյն ուր փնտրիս հաւաքե՛ն եր, ինչպիսի առուակ հոսուն՝ արագ կը հոսե՛ն. . .

Լուռ և հոգիս սիրտս խաւար անձկագիւն Ուր վերջալոյս մը կը հասնի միայնակ. Գեթ շոյ մ'ըլլար սրտիս ազդող հեշտակիւն Սիրոյ անհուն օրօններով ո՛ն յրսակ. . .
1906 ԱՏՈՎՄ

ԻՆՉԵՐԻ՞ ԸՆԴՈՒՆԱԿ ԵՆ

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԻՉՆԵՐԸ

ԹՈՒՐԻՍՏՈՐՄԱՆ ՄԻ ՀՐԷՇՍՅՈՒՆ
ՓՈՐՁ

(Շար. 497-25 և 498-26 նախ. թիւերէն)

Այնուհետեւ քննեց Հ. Ռուչպուլ-եանի կուսակցական դաւաճանութեան հարցը: Կենտրոնական Վարչութիւնը, 1903 թ. «Հնչակ» թիւ 1 ում, մի պաշտօնական յայտարարութեամբ «Քաղաքական տնտեսութեան մի գլուխ գործոց» վերնագրի տակ, մկրտել էր ի միջի այլոց և՛ վերոյիշեալին դաւաճան, պարագիտ և այլ մակդիրներով:

Պատգամաւորներից շատերը, չնայած որ ժողովի սկզբում խիստ նախապաշարուած էին, Հ. Ռուչպուլեանի հարցում, միահամուռ պահանջ դրին Կենտրոնին ներկայացնել իրանց բոլոր այն բանաւոր թէ գրաւոր փաստերը, որոնց հիման վրայ ոչ միայն յեշտալը հոչակուել էր կուսակցութիւնից արտաքուստ, այլ և կովկասում Ա. . . ի ժողովում դատապարտել էր մահաւան, Կենտրոնի լիազոր-դիկատատր Սագունու ջանքերով:

Սագունի և Հ. Արզումանեան ամեն ճիշդ թափեցին շատ մտած թղթեր բերեցին դրեցին մէջտեղ թայց այդ խնդրումն էլ խառնաձուլ կերպով պարտեցին անկարող լինելով որ և է օրինաւոր փաստ ներկայացնել: Որքան յիշում ենք, Պատգամաւորական ժողովը դատապարտեց նոյն իսկ Կենտրոնական Վարչութեան այդ քայլը: Մնում էր քննել, թէ 1903 Յունվարից յետոյ, Հ. Ռուչպուլեանը կատարել էր արդեօք մի այնպիսի յանցանք, որով արժանի եղած լինէր տիրորի:

Գործի վերջին մասը քննելու համար, Պատգամաւորական ժողովը հարկ համարեց գիմել իրան՝ ամբաստանելին և պահանջել լուսաբանութիւններ:

Միջանկեալ ասենք, որ Հ. Ռուչպուլեանը ի պատասխան Դ. Պատգամաւորական ժողովի պաշտօնական գրութեան ու գիմումին, հրամարեց որ և է բացատրութիւն տալ՝ պատճառաբանելով, որ ինքը մի միացեալ Հնչակեան կուսակցութեան անդամ է և համարատու միմիայն նրա Կենտրոնի առջև, հետեւաբար չէ ճանաչում վերոյիշեալ մարմին իրաւասութիւնը: Բայց պիտի ասել, որ իրականութեան մէջ այդպիսի կենտրոն այլևս գոյութիւն չունէր, այլ կային երկու հատուածներ ի Կենտրոններ:

Հոկտեմբերի կէսերին էր, որ մենք ձեռք առանք Միւս Չիթեանի սպանուածեան խնդրը՝ պաշտօնապէս: Պատգամաւորների գրութիւն մեծամասնութիւնը, նախընթաց հարցերի քննութեան ընթացքում, միահամայն հիասթափուելով Սագունուց և ընկերներից՝ արդէն միացել էր օպոզիցիային:

Միւս - Չիթեանի հարցը դեռ չքննուած, օպոզիցիայի առաջարկութեամբ վճռեց, յանուն Պատգամաւորական ժողովի մարդիկ ուղարկել վեր. Հընչակեանների կենտրոնը (դեռ ևս զտուրու էր Լօնդոնում) իմանալու համար թէ ի՞նչ մեղադրանքներ ունին և ի՞նչ փաստերի վրայ հիմնուած՝ Սագունու փաստերի զէմ: Պատգամաւորներ ընտրուեցին, եթէ չենք սխալուում Պ. Գալֆան, Հրահատ և Վարագդատ, որոնք մի ամբողջ օր շափափեցին Լօնդոնի փողոցները գտնելու համար վերակազմեալների կենտրոնը կամ անդամներից մէկին ու մէկին:

Այդ որոնումները մամանակ իմացուեց որ նրանք էլ Պատգամաւորական ժողով են ունեցել որը տեւել է միայն մի շաբաթ, որից յետոյ և՛ պատգա-

մաւորները և՛ Կենտրոնը աներեւոյթացել էին Լօնդոնից:

Այդ անյաջողութիւնը մեծ վիշտ պատճառեց մեր Պատգամաւորական ժողովին, որը մեծ յոյս ունէր վերակազմեալների հետ խնդրել կատարելապէս լուսաբանելու:

Այնու ամենայնիւ Պատգամաւորական ժողովը իր ձեռքի տակ ունեցած զօկուսականներով ու փաստերով ձեռնարկեց Միւսի և Չիթեանի տիրորների քննութեանը:

Այդ քննութեան ընթացքում Սագունին այն կարծիքն էր արտայայտում որ ինքը համոզուած էր. թէ ո՛չ Չիթեանը և ո՛չ էլ Միւսն մաքուր ձգտումներով էին գնում կովկաս: Նրանք ցանկանում էին իրանց ձեռքը գծել Հնչակեան կուսակցութեան ղեկը և ապա ամբողջ կուսակցութիւնը գնել նացիօնալիստական հողի վրայ, բացասելով միանգամայն և՛ սօցիալիզմ, և՛ այն բոլորը՝ ինչ թանկագին են եղել Հնչակեան կուսակցութեան համար . . . Ահա այդ պատճառով էլ ինքը չէր կարող հանդուրժել, որ նրանք մուտք գործէին կովկաս, մոլորեցնելու հին Հնչակեան միամիտ ընկերներին. հետեւաբար ամէն միջոց գործ է դրել որ նրանք ոչ մի յաջողութիւն չգտնեն: Դրա համար գրել է խիստ չըջարեղականներ, որոնք գուցէ գրգռել են սգէտ և կուսակցամոլ Հնչակեաններին:

Սագունին բողոքովին չէր էլ մըտածում իրան արդարացնելու մասին, այլ ընդհակառակը ասում էր.

— Ես այս ճանապարհով կարծեցի փրկել կուսակցութիւնը, հետեւաբար և՛ հայ ժողովրդի ազատագրութեան գործը, իսկ եթէ Պատգամաւորական ժողովը գտնում է իր այդ տակտիկան վընասակար ու վատ՝ ես գնալ պատրաստ եմ, ինչի կատարել հանդարտութեամբ գնալ ընդամենը Պատգամաւորական ժողովը վճռին:

Եւ սակայն, երբ նրա գործակից երկու ընկերները՝ Հ. Արզումանեան և Ս. Տաչիրեան և՛ վերջին ըրպէին նըրան լքելով յարձակողական դիրք բռնեցին, նա յուզուած ու վշտաբեկ չըտով բացազանչեց:

— Ես չեմ զարմանում մանկամիտ ու անգոյն պործիչների ներկայ դասալքութեան վրայ, և արհամարհելով դրանց խնդրում եմ ինձ ժողովին պատասխանատու ճանաչել՝ ամենածանր, ամենապատասխանատու հարցի վերաբերմամբ ես իմ կեանքի գնով պարտաւոր եմ տուածել:

Հ. Արզումանեան և Ս. Տաչիրեան թրջած հաւի նման, այդ ժամանակ ժողովասենեակի մի անկիւնում քաշուած չը գիտէին ի՞նչ պատասխանել:

Ժողովը խորհրդաւոր ծանր լուսթեան տակ ընկճած, մի ու է է կըք էր փնտռում, ահա սուրհանդակը մի հեռագիր բերեց:

Ա. Նազարեկը վերաւորուած է Շըվէյցարիայի կլարտն քաղաքում:

Պատգամաւորներս կայծակնահար եղանք:

— Սկսեցին, գոչեց Որոտրը, և սա երկրորդն է (հնքից):

— Աստուած երրորդից, չորրորդից, ազատի, գլուխը թափ տալով ձայնակցեց Համբը:

Թշուառնե՛ր. կարծես նախազգում էին, որ մի քանի օրից յետոյ, իրանց վրայ էլ պիտի բարձրանար ու իջնէր, վրէժխնդիր ու անթեւած ձեռքը. . .

Վճռեց իսկոյն ուղարկել Գալֆանին Շէյցարիա, հարկաւոր օգնութիւնը հասցնելու վերաւորուած ընկերով:

Սագունին իր ծախքով ընկերացաւ Գալֆայանին:

Մեր ժողովները մինչև նրանց վերադարձը, 4-5 օրով յետաձգեցին:

Ա՛յս այդ օրերը . . . Պատգամաւորական ժողովի նիստերի ընդհատման ընթացքում մտածուում էր այն պատճի մասին որ վճռուել էր յանցապարտների համար: Պատգամաւորներից իւրաքանչիւրը մի պատիժ էր առաջարկում, որոնց շարքում տեղ չունէր ամենեւին մահաւան պատիժը և այդ ոչ միայն մեր Հին Հնչակեան այլ և հակառակորդ վերակազմեալ ֆրակցիայի յանցապարտները նկատմամբ, չնայած որ 2-3 օր առաջ կատարուել էր նրանց երկրորդ արեւնոտ փորձը նազարեկի վրայ:

Շէյցարիայից վերադարձան Գալֆանին ու Սագունին, և յայտնեցին որ Տիէրից նա նստելիս, ինչ որ կասկածելի մարդ նոյնպէս նստաւ իրենց հետ նաև և շարունակեց հետեւել մինչև Լօնդոն:

Նրանք Լօնդոն էին հասել հոկտեմբեր 25 ի երեկոյեան:

Այս լուրը բնաւ չզարմացրեց մեզ, Ամէնքս զգում էինք, որ ինչ որ բան դառնում էր մեր շուրջը: Գիտէինք որ մասնաւորապէս վտանգ էր ըսպանում Սագունուն, և այդ պատճառով էլ բոլորս խորհուրդ տեսցինք նըրան զգոյշ լինել:

Սագունին սաստիկ ախուր էր, Հոկտեմբեր 26 ին բոլորս հաւաքուել էինք կենտրոն և վերսկսել մեր նիստերը: Հերթական խնդիրն էր վճռել թէ ինչպէս պատմել Սագունուն և գործակիցներին: Եզրակացութեան չիկանք: Ծաշից յետոյ էլի հաւաքեցինք: Այս անգամ Սագունին բացակայում էր:

Այդ օրը օղը անձրեւային էր և մտախլապատ, Լօնդոնի փողոցների մըշուր կարծես թափանցել էր և՛ մեր հոգիներին մէջ: Երեկոյեան ժողովից ցրելիս՝ Կենտրոնի առաջ պատահեցինք Սագունուն, որ, եթէ չեմ սխալուում, բազմիսից էր վերադառնում:

Բարեկեցինք ու հեռացանք զէպի մեր անբը:

Սագունին և Ե. Կաճարեանը միասին ուղղեցին զէպի Նուսնից Կրով փողոցը ուր 29 ում ապրում էր Սագունին: Այդ փողոցը մի կողմնակի փողոց լինելով, առհասարակ շատ խուլ էր, մանաւանդ այդ երեկոյեան:

Սագունին և ընկերակիցը, մինչև նոյն փողոցի բերանը միասին զընալուց յետոյ, Եփրեմը բաժանուում է ու գիմում զէպի Տիկ. Սապահ - Գիւլեանի սուներ, որ գտնուում էր մօտակայ մի այլ փողոցի վրայ:

Սագունին առաջանում էր զէպի թիւ 28ը:

Փողոցում կատարելալ մթնութիւն է: Ոչ ոք բացի Սագունուն: Նա հասնում է մինչև տան առաջ, բաց անում երկաթէ վանդակի դուռը, ոտքը դնում ներս, բարձրանալու համար սանդուխներից վեր . . .

Նոյն ըրպէին հանդիպակաց սալալատակից մի սառուեր սլանում է զէպի Սագունին մի ակնթարթում հասնում երկաթեայ վանդակին և երկու քայլի վրայ իրար հետեից արձակելով 4 զնդակ զիթաւալ գետին դրոտում Սագունուն իսկ ինքը, եղեռնական ստուերը խառնըւում է դարձեալ մթնութեան, անյայտանում, թողնելով այնտեղ իր գլխարկը ու արձանակը:

Տնեցիք ու դրացիք, ինչպէս նաև կայծակի արագութեամբ տարած բօթից Եբրեմն ու մեր մօտիկ ընկերները անմիջապէս հասնում են զէպի վայրը: Բայց գտնում են միայն Սագունին մահամերձ:

Նրա միակ խօսքն է լինում. Ա՛հ կնիկմարդի պէս խփեցին. ափսոս . . .

Մի քանի ըրպէից յետոյ Սագունին աւանդում է հոգին:

(Շարունակելի)

ՍԵՂԱՆՍՈՒՐԱԿԱՆ ՏՈՒՆ

— 0 —

Մուսի փողոց թիւ 6, Սիմկերի մասնա-

ճիւղին քով, Ժիւսքերի դիմաց:

Կը գնէ և կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժեթղթերը, մասնաւորաբար Քրեւի Ֆոնսիէի հին և նոր, Բուժէլիի երկաթուղեաց և Բանամայի ֆրանսական վաւերացնալ արժեթղթերը, որոնց սկզբէն ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի:

Արժեթղթերու արդի խիստ նպաստաւոր գններէն կրնան օգտուել Եգիպտաբնակ մեր ազգայինները մեզի գիմելով:

Մասնավճարներով - 25, 50, 100 - կարելի է արձեթղթերու տիրանալ, և մասնիկ պայմաններով՝ աւանդի փոխարէն՝ փոխառութիւններ կ'ընել:

Սեղանաւորական ամեն տեսակ գործառնութիւններ, և աւելորական ամեն կարգի Պոստալ զեղչելու պատրաստակամութիւն:


Սեղանաւորական և Պորտայի գործառնութիւններ և ա'յս կարգի գործերու վերաբերեալ գաւառներէն եղած յանձնարարութիւններ փութով կը կատարուին:

Բուժէլիի երկաթուղեայ վիճակահանութեանց պանդ 0թօմանէն երաշխաւորեալ և վաւերացեալ քուսակներէն գնել ուղղորդներու համար՝ լաւ պատահութիւն մ'է մեզի գիմել, որովհետեւ պանդ 0թօմանէն ուղղակի կատարանք յիշեալ քուսակները: 12-50

ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇԾԵԱՆ

ԹՈՒՐԻՍՏ ՍՏՕՐ (TOURISTS' STORES)

Նուպար քաշա փողոց՝ Խիվիսալ Օրիլի դիմացը



Բըրօսթ "Crockett" Ամերիկայի լաւագոյն գործարանն է. զիմացուուն և հանգիստ կօշիկներու. որոյ Եգիպտական միակ ներկայացուցիչն է ԹՈՒՐԻՍՏ ՍՏՕՐ 19-43 ԳԻՆԵՐԸ ԽԻՍԱ ՉԱՓԱԻՈՐ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԽԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐՔԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՔ

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՔԱՐՔ

ՅԱՏԿԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀՆԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան գներով ունենալու կամ վաճառելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չկայ հոս ու հոն ժամավաճառ ըլլալու . բաւական է անդամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ՝ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գտնելը պարզապէս սխալ է .

Մեր վաճառատունը վերջապէս, զինքնու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբ անմրցելի է, որուն անփոփոխ ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՔԱՐՔ

ՈՒՍՈՒՑԻՉ

Պօլսոյ Կեդրոնական Ուսումնական Խորհրդէն վկայեալ ուսուցիչ մը պատրաստ է ստանձնել հայերէնի, թուրքերէնի, անգլերէնի, ֆրանսերէնի, իտալերէնի, քիմիայի, ֆիզիկայի, արտադրութեան և թէ՛ ստուերու մէջ .

Պատրաստ է նաև վաճառատուններու մէջ հաշուակալութիւն և թղթակցութիւններ կատարել .

Իրմել Խմբագրութեան .

ԾՊԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

« Արշալոյս » ի տպարանին մէջ, Շէրիք բաշայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին Պ. Արշակ Զօպանեանի հետեւեալ հեղինակութիւնները .

1. Քեթուածներ Գին 5 Քր .
2. Մկրտիչ Պէշիկթաշիեանի կեանքն ու գործը Գին 5 Քր .

ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Ա . ՊԱՆԿԱՆ

- Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
- « 2 Հիւլէն 50 »
- « 3 Սուլթան Համիտ ինչպէս միտու Գին 1 Քրանգ

Ազգային սահմանադրութիւն սակաւաթիւ օրինակներ Գին 12 ՂՂ .

Ա Ձ Դ

Պ. Արտաշէս Այրարտեան, վրկայեալ ճշտուցիչ և նախկին շրջանաւարտ Մխիթարեանց, որ պաշտօնավարած է 22 տարիներ թէ՛ Պօլսու և թէ՛ դատաւանները, կը փափաքի արձակուրդի երկու ամիսներուն իրը կրկին զատախօսել առաւօտեան ժամը 8—12. Աւստի մեր արդոյ ազգայիններէն անոնք որ չեն ուզեր իրենց զաւակաց կրթական գործը ընդհատել այսպիսի երկար, կրնան ամէն օր իրիկուան ժամը 6—8 Հայ. Ընթացատան—Լսարանի մէջ իրենց գիւմէ՛ այդ առթիւ մասնաւոր համաձայնութեան մը գալու համար .

ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՅԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ

ՍՍԵՆԱԳՈՐԾ

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԵՏԱՔՍՈՎ ԲԱՆՈՒԱԾ

400 թիւէ բարկացած

ԹԻՒՐ 5 ՂՐՇ . ՈՂՁ

Մեծ սրճարան հայկականի մէջ ի սոյն դրուած սոյն անմահ մեծաքանակ ձեռագործի վիճակահանութիւնը՝ որուն անցեալ Փետրուար ամսոյ մէջ տեղի ունենալը ծանոցուած էր, բայց ինչ ինչ պատճառներով յետաձգուած է . անոնք որ սոյն չբնազ զարգը ունենալ կը ցանկան, ժամ առաջ թող դիմեն « Արշալոյս » ի տպարանը Տ . Գեորգ Փափուկեանի՝ մնացեալ սակաւաթիւ տոմսերէն գնելու համար, որմէ անմիջապէս յետոյ տեղի պիտի ունենայ վիճակահանութիւնը Հայկական սրճարանի մէջ կանխաւ ծանուցուելով .

ԽՈՐԱԿՐԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՅ ԿՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

« Արշալոյս » ի Աղէքսանդրիոյ ԼԻԱԶՈՐ Կործակալ—Ներկայացուցիչն է Տիար Յ. Տուրսունեան՝ թուակահանք միջնա ներկայ առաջին շրջանի աւարտուած . այսինքն 908 Դեկտ. 31, և վերնարելի է .

Մասնաւորապէս, տպագրութեանց բաժանորդագրութեանց և ներթականի հետ կապ ունեցող առևտրական ընդ որ խնդրոց համար կարելի է համաձայնել իրեն հետ, և վճարում ընել « Արշալոյս » ի Խմբագրութեանէն կնքեալ և Քարտուղարէն ու Մատակարարէն ստորագրեալ ստացականներու փոխարէն .

Առանց վերոյիշեալ ստացականներուն եղած վճարումներու համար Խմբագրութիւնը ո՛ր և է պատասխանատուութիւն չ'ստանձնիր .

« Արշալոյս » Աղէք. մէջ ձեռքէ կը ծախուի Կործակալութեան քով .

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց Գաթէ Տը Լա Պուրսի կից

Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱԶԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկլերներն են եւ ստոյնցմէ մինչև ցարգ 17,000,000 ծախուած է .


400 և աւելի վկայական եւ մեքենաներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁՈՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսի մէջ ստացած է . ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՐՈՒՍԻՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԳՂՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ն . Բ . ՆՅՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զոչանալ, ուշագրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկլերի յանկանջիմ



ԳԻՆ ԶՊԱՒԱՐ

Ձեր դասեր և նորոգութիւններ, Սինկլեր մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՍԱՐԳԻՍ Յ . ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, փոփոխութեան եւ կազմ վաճառաներու .

Տասներկու տարիներ « Սինկլեր » Ընկերութեան քով մեքենախարուսթեան զբաղել յետոյ, այժմ զինավաճառ Զախարիա Գոնտաթիւնուի քով պաշտօնեայ է զէնքերու եւ մեքենայարգարման ճիւղին մէջ .

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանոց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարագոյ ժամերը պիտի արամազրէ կարի մեքենաներու, ֆոնօկրաֆներու, կազմ վաճառաներու, նորոգութեանց եւ յարգարման .

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու՝ կրնան դիմել իր սուէնը Պապը—Շէրիքի կողմը Շարա Պէղղալա՝ կրնան հարցնել նաև Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէններուն, եւ զարձեալ դիւրութեան համար քարթ բոստալով մը կրնան դիմել « Արշալոյս » Տպարանին . Նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը եւ Տունին թիւը .

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ եւ փորձեր կատարուելէ յետոյ .

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ . 19—50

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ՇՈՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ . ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԻ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զբոսն վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատեղին միակն է որ ապրանքներու թարմութիւնը եւ մաքրութեան շնորհիւ մնալուն գիրք մը բռնած է տարիներէ ի վեր .

Նպարեղներու վերաբերեալ ամէն ինչ՝ փոքր ինչ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթիւրի են սոյն վաճառատեղին մէջ .

Մեր յաճախորդները զո՛ր թողելու նպատակաւ՝ սպասելի ապրանքներու ընտրութեան եւ գնումին ատեն շատ խնամք եւ նոյն իսկ բժախորդութիւն կընենք . Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է եւ մաքուր մեր քով .

Կշիռը, որուն համար ուրիշ շատ տեղեր գանգատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն տուած է . վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ զո՛ր մնացած են .

Ձեր առնին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար դիմեցէք ի Պապ-Էլ-Խալի՛ մեր վաճառատեղին եւ չ'պիտի զղջաք . 16-41

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍՍՐՃԵԱՆ